


Գ. ԱՆԱԶԱՆՅԱՆ
Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

633.51



A $\frac{\pi}{415x}$ ԲԱՄԲԱԿԻ ՔԱՂՅԱՆԻ, ԿՈՒԼՏԻՎԱՑԻԱՅԻ
ԴՐԱՄԱԿԱՆ ՇԽՁՅՈՎ ԲԱՐՁՐԱՅՆ
ԴԱՇՏԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ



1934

ՏԱՐԱՎՈՐԱԿԱՆ

1934

ՏԱՐԱՎՈՐԱԿԱՆ

ଶ୍ରୀକୃଷ୍ଣ ପାତ୍ର
ପାତ୍ରପାତ୍ରପାତ୍ର
ଶ୍ରୀକୃଷ୍ଣ ପାତ୍ର

Դ. ԱՐԱՋԱՆՅԱՆ

ԲԱՄԲԱԿԻ ՑԱՆՔԵՐԻ ՔԱՂՀԱՆՆ ՈՒ ԿՈՒԼՏԻ- ՎԱՑԻԱՆ

Թաղհանի և կուլտիվացիայի հիմնական նպա-
տակն ե՝ պայքարել մոլախոտերի դեմ և ստեղծել
բարենպաստ ողային, ջրային և սննդառության
պայմաններ կուլտուրական բույսերի զարգաց-
ման համար։ Մոլախոտերի դեմ կովելու աշխա-
տանքներն ոկազում են նախքան ցանքը և մեծ
եֆեկտ են տալիս, յերբ նրանք կատարվում են
ճիշտ և ժամանակին։ Աշնանային խոր վարը,
գարնանն իր՝ ժամանակին և ճիշտ կատարված
կրկնավարն ու փոցիսը, միջնակներից և առունե-
րի վրայից սիստեմատիկորեն մոլախոտերը վոչըն-
շացնելը, ժամանակին կատարված ցանքը և փրփ-
րեցումը, կանխորոշում են բամբակի հետագա
դարգացման ընթացքը և մեծապես հեշտացնում
են ցանքի նկատմամբ կիրառվելիք խնամքը։ Հա-

կառակ պատկեր ե ստացվում, յերբ ցանին նախորդող աշխատանքները կատարվում են անփույթ և անխնամք: Այս դեպքում բամբակի բերքատվությունը համարյա ամբողջապես պայմանավորված ե լինում ցանքերի խնամքի քանակով և վորակով (քաղհանի, կուլտիվացիայի, ջրի, նոսրացման):

Քաղհանի և կուլտիվացիայի աշխատանքները բաժանվում են յերկու մասի.

1. Քաղհան և կուլտիվացիա միջարքային տարածություններում.

2. Քաղհան և փխրեցում շարքերում:

Առայժմ յեղած մեքենաներով ու գործիքներով հսարավոր ե մեքենայացնել միջարքային տարածություններում կատարվող աշխատանքները, իսկ շարքերում աշխատանքները կատարվում են ձեռքի հողուրագներով:

Հողի փխրեցումը պիտի անել շուտ, նախքան բամբակի ծիլերի յերեալը: Ցելաջրից հետո հողը ճնշտում ե և կեղեակալում: Այս հանգամանքը հաճախ պատճառ ե դառնում մեծ վնասների, վորովիետե դրանից սերմերի վորոշ մասը չի ծլում, ստացվում ե նոսր ցանք և բերքի նվազում: Այդ պատճառով բոլոր դեպքերում, յերբ կատարված ե «սապսու վար», հողի քեշը գա-

ուն սկես պիտի կատարել փոցիս կամ տափան՝ հողի կեղևը փշքելու, ծլած մոլախոտերը վոչըն-չացնելու, բամբակի չծլած սերմերը ծլելու և լով պայմանների մեջ դնելու համար. փոցիսը պիտի կատարել «զիգ-զագ» փոցխով։

Ցանքից մոտ 20—25 որ հետո, յերբ բույ-սերն ունենաւմ են, սովորաբար, մեկ—յերկու խսկական տերեւ, պիտի կատարել առաջին քաղհանու և կուլտիվացիան։ Դրանց դերն ե՛ փշշ-ըել հողի կեղևը և փխթեցնել այն, վոչնչացնել միջարքային տարածություններում և շարքերում յեղած նորածիլ մոլախոտերը։ Դրա հետևանքը լինում ե այն, վոր ուժեղանում ե բույսերի ար-մատային սիստեմի, ապա և վերերկրյա մասերի աճը։

Շատ կարևոր ե միայն, վորպեսզի այս կուլ-տիվացիայի ժամանակ հողի շերտը կտրվի և ա-ռանց շուրջ տալու տեղում թողնվի։ Դրա համար կուլտիվատորի սովորական թաթերի փոխարեն պիտի գործադրել կտրող և սուր դանակներ։ Առաջին կուլտիվացիան պիտի կատարել նաև այն հաշվով, վոր կողքերի կտրող դանակները շար-քերից մոտ 10 սմ. հեռու մնան։ Հետագա կուլ-տիվացիայի ժամանակ ակոսային ջրի դեպքում կուլտիվատորի վերջին սովորական թաթի փո-

խարեն պիտի ամրացնել բուկլիցի ձև ունեցող
թաթ, վորը ջրելու համար ակտաներ ե բաց ա-
նում:

Պատառուկով ուժեղ վարակված արտերում
նախ պիտի շարքերում կատարել ձեռքի քաղհան
և հետո նոր միջարքային տարածությունների
մշակություն։ Մնացած բոլոր դեսքերում նախ
պիտի կատարել մշակման աշխատանքները և
ապա նոր սկսել քաղհանը։

Ամեն անգամ ջրելուց հետո հողը կեղև ե
կազմում, վորը դժվարացնում ե սղի մուտքը
հողի մեջ և նպաստում ե ջրի գոլորշիացմանը
հողի մակերեսից, իսկ այդ շրջանում ամեն մեկ
պատճառ, վորը պակասեցնում է թարմողի քանակը
հողում, պատճառ ե դառնում նաև բույսերի թույլ
զարգացման և ապա բերքի անկման։ Ահա այդ
տեսակետից մեծ ե կուտիվացիայի և քաղհանի
(շարքերի մշակման) դերը վեգետացիոն ջրումնե-
րից հետու Մեծ ե նրա դերը նաև հողի մեջ լեղած
ջուրը խնայողաբար ծախսելու խնդրում։ Պնդա-
ցած կեղևակալած հողում ստեղծվում ե մազական
անցքերի անընդհատ սիստեմ, վորոնց միջով ջուրն
անարգել բարձրանում և գոլորշանում ե հողի
մակերեսից։ Այդ մազական անցքերի խախ-
տումը վորոշ խորությամբ ստեղծում ե հողի

մակերեսի վրա դատիչ շերտ և նվազեցնում ե
խոնավության գոլորշիացումը՝ Մոլախոտերի վո-
չչացումն ևս մեծ չափով պակասեցնում ե ջրի
գոլորշիացումը:

Կուլտիվացիանների և քաղհանի թիվը կախ-
ված ե վեգետացիոն շրջանում բամբակին տըր-
վող ջրի թվից, հողերի մոլախոտերով վարակված
լինելու աստիճանից, հողային տիպերի առանձ-
նահատկություններից և այլն։ Ամբողջ վեգետա-
ցիայի ընթացքում ցանքերը պիտի քաղհանվեն
և անգամից վոչ պակաս, իսկ մոլախոտերով ու-
ժեղ վարակված հողերում ավելի թվով կուլտի-
վացիա և քաղհան պիտի կատարել։ Այդ աշխա-
տանքները պիտի կատարվեն այն հաշվով, վոր
բամբակի ցանքերը միշտ լինեն մոլախոտերից
մաքուր և փուխը վիճակում։

Մեզ մոտ այդ աշխատանքներն սկսվում են
հետևյալ հերթականությամբ։

Ցանքից մոտ 20—25 որ հետո սկսվում ե
առաջին քաղհանը և կուլտիվացիան։ Այդ աշխա-
տանքն ընկնում է մայիսի 18-ից մինչև հունիսի
10-ը։ Սովորաբար բամբակենին ունենում ե
այդ շրջանում 1—2 իսկական տերև։ Ամեն մե-
հապաղում այս շրջանում պատճառ ե դառնում
բամբակենու թույլ զարգացման, յերկարացնում
և նրա վեգետացիան և նվազեցնում ե բերքը։

Յերկրորդ քաղհաննն ու կուլտիվացիան ընկնուա
են այս առաջին քաղհանից 17—20 որ հետո, վորը
տեղի յե ունենում առաջին վեգետացիոն ջրից
5—7 որ հետո:

Այդ ժամանակ բույսի վրա լինում ե 4—5 տե-
րև Մոլախոտերի զարգացումն այդ շրջանում
վոչ պակաս վտանգավոր ե, քան առաջին քաղ-
հանի ժամանակ, ուստի այստեղ ևս ամեն մի
հապաղում մեծապես իջեցնում ե բամբակի բեր-
քատվությունը: Մեզ մոտ այդ աշխատանքներն
սկսվում են հունիսի 7—11-ից և վերջանում
նույն ամսի 25—30-ին:

Յերրորդ քաղհանը և կուլտիվացիան կատար-
վում են դրանից մոտ 17—22 որ հետո, այն ե
հունիսի 26-ից մինչև հուլիսի 14—21-ը:

Չորրորդ քաղհաննն ու կուլտիվացիան կատար-
վում են 18—22 որ 3-րդ քաղհանից հետո՝ մո-
տավորապես հուլիսի 15—22-ից մինչև ոգոստոսի
2—9-ը: Դրանից հետո՝ յեթե վորոշ արտերում
ուժեղ զարգանում են դանդուրդանը, կպչուկը
և ուրիշ մոլախոտերը, ապա պիտի կատարել
հինգերորդ մշակություն ևս, վորն սկսվելու յե
3—10 ոգոստոսի և վերջանալու յե նույն ամսի
18—20-ին: Այսպես, ուրեմն, համարյա բոլոր շրջ-
անների համար վերջին քաղհանը տեղի յե ու-

Նենուամ մոտավորապես ոգոստոսի 2-րդ կեսին՝
կարող են լինել դեպքեր, յերբ բամբակենին հո-
վի բերբիության կամ ուրիշ պատճառներից վեր-
ջն ջրից հետո ել շարքերը չկարողանա լցներ.
Նման դեպքերում մոլախոտերի զարգացումն ան-
խափան կշարունակվի նաև դրանից հետո, ուստի
անհրաժեշտ ե դրանք հեռացնել ձեռքով (9 ոգոս-
տոսի—5 սեպտեմբերի):

Բամբակի ցանքերի կուլտիվացիան և քաղհա-
նը կարող են տալ զգալի եֆեկտ միայն այն
դեպքում, յերբ կատարվում են ժամանակին, ա-
ռանց ուշացումների, յերբ մոլախոտերը դեռ
նոր են ծիլեր արձակել և զգալի բարձրության
չեն հասել:

Քաղհանի և կուլտիվացիայի թիվը տարբեր
հոգերում լինում ե տարբեր։ Ավելի կուլտուրա-
կան և լավ մշակված հողերում բավական ե լի-
նում 2—3 քաղհան և համապատասխան չափով
ել կուլտիվացիա, իսկ մոլախոտերով ուժեղ վա-
րակված և վատ մշակված հողերում այդ ոպերա-
ցիաների թիվը համապատասխան 4—5-ի։

Համաձայն Հողժողկոմատի 1934 թիվի հրա-
հանգի՝ բամբակի ցանքերը ջրվելու յեն տարբեր
սխեմաներով, ըստ վորում ամեն մեկ սխեմայի
դեպքում մշակման աշխատանքներն են կատարու-



Վելու յեն տարբեր ժամկետներում։ Այդ ժամկետները հետևյալներն են.

ԱՇԽԱՏԱՆԴԻՆԸ	ԶՐԻ ՍԽԵՄԱՆԵՐԸ		
	1—2—1	1—3—1	2—3—1
1-ին մշակությունը	22/5—8/6	20/5—10/6	18/5—6/6
2-րդ	9/6—25/6	11/6—1/7	7/6—25/6
3-րդ	26/6—16/7	2/7—21/7	26/6—14/7
4-րդ	17/7—8/8	22/7—9/8	15/7—2/8
5-րդ	— —	10/8—20/8	3/8—18/8
Մոլախոռ հեռացնելը	9/8—30/8	21/8—3/9	20/8—5/9

Յերեսելով մշակման վերոհիշյալ ժամկետներից, յուրաքանչյուր գյուղ, յուրաքանչյուր կոլտնտեսությամբ ազրոնոմի ոգնությամբ պետք է կոնկրետացնի այդ թվերը և մշակի աշխատանքներն սկսելու և վերջացնելու այնպիսի ժամկետներ, վորոնք համապատասխանեն իրենց պայմաններին։

Թաղիանը, կուլտիվացիան, ջուրը և նոսրացումը կապված են միմյանց հետ սերտորեն։ Բոլորը միասին կազմում են ձեռնարկումների ամբողջական սիստեմ, աշխատանքների կոմպլեկս, վորոնց նպատակն է բերքատվության բարձրա-

ցումը և վորոնց ուացիոնալ կապակցված դասա-
վորությամբ միայն հնարավոր եւ ապահովիել այդ
ձեռնարկումների մակսիմալ եֆեկտը։ Աշխատանք-
ների հենց այդպիսի դասավորության պիտի
ձգտի ամեն մեկ ազգոնում, ամեն մեկ բամբակա-
ցան կոլտնտեսականու

Ա. ԿԱՐԱԳՅՈՂՅԱՆ

ԲԱՄԲԱԿԻ ՆՈՍՐԱՑՈՒՄԸ

Վորպեսդի բամբակի բույսերը հավասարաչափ
դարձանան և մեկը մյուսին չխանգարեն, պետք
եւ նրանց արամագրել հավասար և անհրաժեշտ
չափով տարածություն, վոր կատարվում եւ նոս-
րացման միջոցով։

Նոսրացման աշխատանքներն անհրաժեշտ ե-
կատարել իր ժամանակին. ժամանակից շուտ
կամ ուշ կատարած նոսրացումը տալիս եւ բա-
ցասական հետեւանք։

Առաջին քաղհանից անմիջապես հետո (զու-
գընթաց) պիտի կատարել առաջին նոսրացումը,
յերբ բամբակենու վրա զարգացած են լինում
2 իսկական տերևներ Նոսրացումը չպետք եւ
կատարվի քաղհանի ժամանակ քաղհանավորների
կողմից, այլ պետք եւ կատարեն առանձին փոր-

ձված մարդիկ քաղհանից անմիջապես հետու Այս
աշխատանքը յերբեք չի կարելի ուշացել, հա-
կառակ դեպքում, խտության պատճառով՝ բամ-
բակի բույսերը միմյանց կխանգարեն, լույսի
պակաս կզգան, վորի հետեանքով ուժեղ կերկա-
րեն, կմնան նվազ ու կճուղավորվեն շատ թույլ
և քիչ։ Այս բոլորի հետեանքը կինի այն, վոր
նման դաշտերից շատ քիչ բերք կստացվի։

Յերկրորդ նոսրացումը պիտի կատարել ա-
ռաջինից մոտավորապես 14—15 որ հետո, յերբ
բամբակենին ունենում ե 4 տիրեւ։

Առաջին նոսրացման ժամանակ ամեն մի
բնում պետք ե թողնել 2 բույս և բունը բնից
10—12 սմ. հեռավորության վրա։


Յերկրորդ նոսրացման ժամանակ բները
պետք ե մեկընդմեջ հեռացնել այն հաշվով, վոր
վերջնականապես բների մեջ մնա 2 բույս, իսկ
բների միջտարածությունը 20—25 սմ։ Պարարտ,
ուժեղ հողերում քների միջտարածությունը պի-
տի վերցնել ավելի լայն (վերոհիշյալ թվերի
սահմաններում), քան աղքատ հողերում։ Միայն
շատ ուժեղ հողերում բների հեռավորությունը
կարելի յե թողնել 30 սմ։ Այս դեպքում, առա-
ջին նոսրացման ժամանակ, բների միջտարածու-
թյունը պիտի թողնել 15. սմ., իսկ յերկրորդ

Նոսրացման ժամանակ մեկընդմեջ բները հեռացնելով միջտարածությունը գարձնել 20 սմ.:

Նոսրացման ժամանակ պետք է հեռացնել վատ զարգացած, նվազ բույսերը, իսկ առողջ ները թողնել, Նոսրացումն անհրաժեշտ է կատարել շատ խնամքով, անպայման պահպանել բների նորմալ հեռավորությունը և բներում չթողնել նշվածից շատ բույսեր: Հեռացվող բույսերը պետք է հանել արմատով:

Վերը հիշատակած միջարքային և միջքնային տարածությունները շարլոն անփոփոխ թվեր չեն. Նրանք տեղերում պետք է կոնկրետացվեն, յել նելով տեղական կլիմայական և հողային պայմաններից: Խիստ հաշվի պետք է առնել նաև մշակվող տեսակի առանձնահատկությունները:

A Կ/Տ/7



Մըբագրիչ Խ. Այվազյան
Հանձնվել է արտադրության 1934 թ. հունիսի 28-ին
Շատրվագին և ապելլու 1934 թ. հուլիսի 4-ին
Թույլատրվում է. ԳԱ-ՎԱՒԻ լիազոր № 374
Հըստ. № 119, ակրու 2000, Պատվեր № 438

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038917

60343

Հ Տ Ա Վ Բ 10 Կ.

Ա 4157



Г. АГАДЖАНЯН
С. КАРАГЕЗЯН

Путем вспашки и культивации поднимем урожайность
хлопковых полей

Сельхозгиз

1984

Երևան